

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/3

29 մայիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանի 23.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 28.03.2014 թ-ի թիվ 1450 որոշման դեմ:

Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ կողմից Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանին հասցեագրվել է 28.03.2014 թ-ի թիվ 1450 Որոշումը, կապված չկատարված հարկային պարտավորության հետ:

Ի պատասխան նշված Որոշման հայտնվում է, որ Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանը ՀՀ Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից 2012 թ-ի դեկտեմբերի 20-ին հաշվառումից հանվել է /պատճենը կցվում է/:

Միաժամանակ, ս.թ. ապրիլի 18-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ-ում ներկայացվել է Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանի 2012 թ-ի հարկային պարտավորության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ըստ որի հաշվառումից հանվելու պահին Ա/Ձ-ն պարտավորություններ՝ այդ թվում հարկային, չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դրույթը Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանը խնդրում է վերանայել ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 28.03.2014 թ-ի թիվ 1450 Որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 28.03.2014 թ-ի թիվ 1450 որոշման (այսուհետ նաև Որոշում) համաձայն, 28.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանի (ՀՎՀՀ 35040732, հասցե՝ ք.Երևան, Ռուսթավելի 26) չկատարած պարտավորությունները կազմում են 45.979 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճարի ապառք՝ 43.384 դրամ /առաջացել է 2012 թ-ի ապրիլ ամսվա համար հաշվարկված նվազագույն սոց. վճարի և տույժի գումարից/, հաստատագրված վճարների գծով՝ 2.154 դրամ /առաջացել է 2010 թ-ի դեկտեմբեր ամսվա ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հայտարարության հիման վրա հաշվարկված տույժից/, եկամտահարկի գծով 440 դրամ /առաջացել է 2012 թ-ի ապրիլ ամսվա համար հաշվարկված տույժից/, որը ենթակա է գանձման:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի, որի համաձայն հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի կողմից ընդունվել է 28.03.2014 թ-ի թիվ 1450 որոշումը՝ Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանից 45.979 դրամ գումար գանձման առաջադրելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշման մեջ տեղ է գտել վրիպակ: Մասնավորապես, Որոշման համաձայն Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանի պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով չկատարած պարտավորությունները կազմում

են 43.384 դրամ, որն առաջացել է 2012 թ-ի ապրիլ ամսվա համար հաշվարկված նվազագույն սոցիալական ապահովության վճարի և տույժի գումարից: Սակայն իրականում 43.384 դրամ գումարն բաղկացած է 2012 թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված նվազագույն սոցիալական ապահովության վճարի գումարից, ինչպես նաև 2010 թ-ի 4-րդ, 2011 թ-ի 1-ին և 2012 թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններում արտացոլված պարտավորությունները մասնակի վճարելու համար սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկված տույժերի գումարներից:

Քննարկման ընթացքում հաստատվեց այն հանգամանքը, որ 28.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանի կողմից չկատարած պարտավորությունների գումարը կազմել է ընդամենը 45.979 դրամ, այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով 43.384 դրամ, հաստատագրված վճարի գծով՝ 2.154 դրամ և եկամտահարկի գծով 440 դրամ: Նշված փաստը հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 28.03.2014 թ-ի թիվ 1450 որոշմամբ 45.979 դրամ վճարման ենթակա գումարը գանձման առաջադրելու համար:

Ինչ վերաբերվում է գանգատում նշված այն պնդմանը, որ Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանը ՀՀ Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից 2012 թ-ի դեկտեմբերի 20-ին հաշվառումից հանվել է, ապա հարկ է նշել հետևյալը:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է»:

Իր հերթին, նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն. «Անհատ ձեռնարկատերն ունի գույք՝ սեփականության իրավունքով, և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով»:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու մասին տեղեկանքի համաձայն Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանը հաշվառումից գուրս է եկել 20.12.2012 թ-ից, սակայն հաշվի առնելով, որ մինչև հաշվառումից դուրս գալը Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանը ունեցել է չկատարված պարտավորություններ, հետևապես որպես ֆիզիկական անձ Հերմինե Ալեքսանյանն իր պարտավորությունների համար պետք է կրի պատասխանատվություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Հերմինե Ալեքսանյանի 23.04.2014 թ-ի գանգատը մերժել:
Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ